Արձանագրություն N 4

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան	6 մարտի 2017թ. ժ. 14:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ	Է. Սանամյանը
Հանձնաժողովի անդամներ՝	Ս. Հակոբջանյանը
	Լ. Օհանյանը
	Ե. Սմբատյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյանը

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2017 թ-ի մարտի 2-ի նիստով ընդունած որոշման մասին:

Հանձնաժողովը փաստելով այն, որ «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները չներկայացան բանակցությունների, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 168-ն որոշմանը կից Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44 կետի 5-րդ ենթակետի զ)կետը(*բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացված գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում):*

Որոշեց՝

1. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանին, չկայացած գնման ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը հրապարակել տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ Է. Սանամյան

Անդամներ՝ Ս. Հակոբջանյան

Լ. Օհանյան

Ե. Սմբատյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան